Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Նոր ուղու միջնակարգ դպրոց

Թեմա՝ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Վերապատրաստող, մենթոր՝ Զարոյան Մարինե

Ուսուցիչ՝ Հակոբյան Արմինե

Արարատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

Գլուխ1.

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1.ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ ----------6

1.2. . ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ----------8

1.3. ԿԱՐԴԱԼՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ----------22

Գլուխ 2.

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

2.1. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՂԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ----------16

2.2. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ ----------17

2.3. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ----------18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------29

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------31

ՀԱՎԵԼՎԱԾ----------32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անառարկելի է, որ լեզվառճական արտահայտությունների գործածումը թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում ավելի պատկերավոր ու հարուստ են դարձնում մեր ասելիքը։ Գեղեցիկ և պատկերավոր խոսք կառուցելու համար անհրաժեշտ է տիրապետել լեզվական նորմերին, բառապաշարին, խոսքարվեստին և լեզվառճական արտահայտությունների ճիշտ և դիպուկ կիրառելուն։

Լեզվառճական արտահայտություններն աշակերտներն ուսումնասիրում են միջին և ավագ դպրոցում, սակայն տարրական դասարանի <<Մայրենիի>> դասագրքերում զետեղված բնագրերում բազմաթիվ պատկերավորման միջոցներ են գործածված։ Դրանք սովորաբար ներկայանում են դարձվածքների,մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների, փոխանունությունների, չափազան ցությունների և պատկերավորման այլ միջոցների տեսքով։ Վերը նշվածներն ուսում-նասիրում է լեզվաբանության <<Ոճաբանություն >> կոչվող բաժինը։

Լեզվաբանության այն ճյուղը, որը զբաղվում է խոսքի և ոճի ուսունասիրությամբ, կոչվում է ոճաբանություն։ Ոճը մտքերն արտահայտելու համար ընտրվող լեզվական միջոցների ու եղանակների տարբերությունն է։ Ոճաբանությունը կամ ոճագիտությունն ունի իր ուսումասիրության խնդիրները, նպատակները, ելակետն ու որոշակի սահմանները[1]։ Ոճագիտության ուսումնասիրության ոլորտը կամ նրա սահմանները համեմատաբար ավելի տարողունակ են, քանի որ այն ուսումնասիրում է և՛ հնչյունը, և՛ բառն ու բառակապակցությունը, և՛ նախադասությունը, և՛ խոսքի դրսևորման տարբեր ձևերն ու եղանակները։ Ոճագիտության ուսումասիրության առարկան նաև բառն է։ Այստեղ բառը դիտվում է ոչ միայն իր քերականական և անվանողական հատկանիշներով, այլև իբրև պատկերավորման և արտահայտչական միջոց։ Մենք բառը գործածում ենք գեղարվեստական պատկեր ստեղծելու , մեր խոսքին հուզաարտահայտչական երանգ հաղորդելու նպատակով։

Ոճագիտությունն իբրև լեզվագիտության ինքնուրույն ճյուղ, մեր երկրի բուհերում

---

[1]Տե՛ս Լ.Եզեկյան, Հայոոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2014, էջ 5-7։

դասավանդվել է 20-րդ դարի 50-ական թվականներից։Այս գործում իր մեծագույն ավանդն է ներդրել վաստակաշատ ակադեմիկոս Գուրգեն Սնակը։ Այնուհետև լույս տեսան բազմաթիվ ոճագիտության ձեռնարկներ։

Մեր **հետազոտական աշխատանքի** հիմնախնդիրը վերաբերում է դարձվածքների ուսումնասիրմանը։

Տարրական դպրոցում լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրմանը մեծ տեղ տրված չէ,սակայն աշակերտների խոսքի գեղարվեստական արժեքի բարձրացումը կրթության այս օղակում կարևորվում է։ Մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք, որ մայրենիի դասերին այս հիմնախնդիրը չի ուսումնասիրվում ըստ անհրաժեշտ մակարդակի։

Այսպիսով, մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդրի **արդիականությունը** պայմանավորված է կրտսեր դպրոցականների բանավոր և մշակել դրանց յուրացման արդյունավետությանը նպաստող դիդակտիկ խաղեր և թեստային առաջադրանքներ գրավոր խոսքի գեղարվեստական մակարդակի բարձրացման ծրագրային պահանջով ։

Մեր ուսումնասիրության **նպատակն** է ներկայացնել տարրական դպրոցում ուսումնասիրվող լեզվաարտահայտչամիջոցները և ներկայացնել մայրենիի դասերի ընթացքում դրանց յուրացման հնարավոր ուղիներ։

Մեր նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք **հետևյալ խնդիրները**.

1.ՈՒսումնասիրել մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականություն և դիտարկել քննարկվող սկզբունքային մոտեցումները։

2.Դիտարկել տարրական դպրոցի մայրենիի ծրագրերն ու դասագրքերը հետազոտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից։

3.Վերլուծել մայրենիի դասերի ընթացքում իրականացվող լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրման գործընթացի դրվածքը և ծագած խնդիրները։

4.ՈՒսումնասիրել ավարտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ ուսուցիչների կարծիքները և վերլուծել արդյունքները։

5.Ներկայացնել մեթոդական ցուցումները գործընթացի կազմակերպման խնդիրների վերաբերյալ:

Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի **նորույթը.**

Մշակել ենք տարրական դպրոցում դարձվածքների ուսումնասիրման գործընթացի մեթոդական առանձնահատկությունները :

ՈՒսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ **մեթոդները.**

- մասնագիտական գրականության ուսումնասիրում,արդյունքների դիտարկում,
- փորձնական դասերի վարում,արդյունքների վերլուծություն,
- կրթական փաստաթղթերի ուսումնասիրում հետազոտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից :

ՈՒսումնասիրության **տեսական** և **գործնական** նշանակությունը.

Գործնական նշանակությունը:

Մեր մշակած մեթոդական ցուցումները կարող են ՀՀ տարրական դպրոցի ուսուցիչները:

ԳԼՈՒԽ 1.

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1 Դարձվածքների ընդհանուր դիտարկում

Դարձվածաբանությունը լեզվաբանության երիտասարդ բաժիններից է, թեև դարձվածք տերմինը գոյություն է ունեցել ավելի վաղ ժամանակներում: Որպես դարձվածքի սահմանում կարող ենք տալ հետևյալ բնորոշումը:

Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած[3]: Դարձվածքների սահմանումը տալիս է նաև Գ.Ջահուկյանը.

Միասնական իմաստով կապված և նույնությամբ վերարտադրվող կայուն բառակապակցություններն ու նախադասությունները կոչվում են դարձվածքներ[4]:

Ինչպես տեսանք՝ երկու սահմանումներն էլ փաստում են այն մասին,որ դարձվածքները, թեև երկու կամ ավել բառերի կապակցություն են, սակայն հանդես են գալիս մեկ ընդհանուր իմաստով, ունեն մեկ բառի արժեք: Դարձվածքներ են համարվում որևէ լեզվին բնորոշ և բառացիորեն չթարգմանվող յուրահատուկ արտահայտությունները կամ իդիոմները (գլուխ հանել, գլուխ դնել, սիրտ տալ և այլն), ժողովրդական առածներն ու ասացվածքները: Դարձվածքները ժողովրդախոսակցական խոսքին ու ոճին բնորոշ բառային միավոներ են, որոնք հատուկ են յուրաքանչյուր ազգին: Սրանք բնորոշում և ցույց են տալիս յուրաքանչյուր ազգի ազգային մտածողությունը, լեզվամտածողությունը, լեզվականմիջոցների կիրառման հմտությունները: Դարձվածքներով արտահայտվում են տվյալ ժողովրդի բարքերն ու սովրույթը, նիստ ու կացը, խառնվածքը, կենցաղը գաղափարները փիլիսոփայությունը և այլն: Դարձվածքները հաղորդում են լեզվին պատկերավորություն, հուզականություն:

---

[3]Տե՛ս Պ.Բեդիրյան,Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն,Երևան, 1973թ.,էջ 78-92:

[4]Տե՝ս Գ.Ջահուկյան,Ոճաբանություն,Երևան ,1994թ.,էջ 178-191:

Միևնույն ժամանակ խոսքը դարձնում են ավելի սեղմ, հակիրճ և նպատակային: Սրանք պատրաստի միավորներ են, միասնական իմաստ ունեցող կայուն բառային անբաժանելի, պատրաստի բառակապակցություններ: Բայց մենք չենք կարող ասել, որ ցանկացած բառակապակցություն կարող է հանդիսանալ որպես դարձվածք, այստեղ կարևոր չէ բաղադրիչների և նրանց միասին հանդես գալը:

Դարձվածքների համար գլխավոր նախապայման է, որ այդ անքակտելի բառակապակցություններն ունենան փոխաբերական-այլաբանական իմաստ: Կարևոր է նաև

բաղադրիչների շարահյուսական կապը, իմաստային միաձուլումը։ Դարձվածաբանական միավորների մեջ բաղադրիչ բառերը կորցնում են իրենց իմաստը, այն իմաստը, որն ընդունված է հանրության կողմից, սակայն այստեղ նրանք ձեռք են բերում նոր իմաստ,կամ կարող ենք ասել վերաիմաստավորվում են, ինչպես՝ աչքով տալ, աչքից ընկնել, գլուխը կորցնել։ Դարձվածքային միասնությունները պատկերավոր արտահայտություններ են, որով էլ տարբերվում են մյուս կապակցություններից։ Վերջիններիս կիրառությունը առավել շատ է գեղարվեստական խոսքում ինչու չէ նաև խոսակցական բառապաշարում։ Բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, ինչն էլ ավելի արդիական, հասկանալի, կիրառելի և գործածվող է դարձնում դարձվածքը։

Հայ գրականության մեջ՝ լինի դա գեղարվեստական գրականություն, թե պատմական սեղծագործություն, հաճախակի ենք հանդիպում դարձվածքների, որոնք նպաստում են ավելի ակնառու դարձնել կերպարներին, նկարագրվող իրավիճա կը, շրջապատը, երևույթները և այլն։

Դարձվածքների գործածումը կարող են արտահայտել խոսողի հեգնական, երգիծական, հիացական և զարմացական վերաբերմունը որևէ երևույթի կամ կերպարի նկատմամբ։

Դարձվածքները ունեն նաև սաստկական երանգավորում, որոնք հանդես են գալիս կայուն բառակապակցություններում։ Նման դարձվածքներում բաղադրիչ բառերը հանդես են գալիս որպես հականիշ բառեր, ինչպես՝ ծուռը նստել, շիտակ խոսել ։

1.2. . ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Կրթական համակարգի անցումը 12-ամյա ուսուցման որոշակի խնդիրներ առաջադրեց ուսուցման բովանդակության, նպատակների և համագործակցային մեթոդների գործադրման հարցերում։ Տարրական դասարաններում կիրառվում է մայրենիի ուսուցման համակցված մեթոդը, որը կառուցվում է ընթերցանության և դրա հիման վրա ուսուցանվող լեզվական գիտելիքների համադրմամբ։Սա հնարավորություն է տալիս լեզվական նյութն ուսումնասիրել գործնական ճանապարհով՝ բնագրի շուրջ աշխատանք կատարելով։

Կրթության արդիականացման հայեցակարգն ունի սոցիալական, մանկավարժական և տեխնոլոգիական տեսանկյուններ։ Սոցիալական տեսանկյունն արտահայտված է կրթության որակի բարձրցման ոլորտում՝ որպես պետական,համազգային, քաղաքական խնդիր, որի լուծումը պետք է ապահովի երկրի զարգացումը։ Մանկավարժական տեխնոլոգիան ուսուցման արվեստ է, որը տեխնոլոգիական ժամանակակից կրթության որակի էական ցուցանիշն է։ Անցումը ժամանակակից կրթության համարվում է անցում դեպի կրթության անհատական կողմնորոշիչ տիպին, որը կրթական տեխնոլոգիայի առավել բարձր մակարդակ է։Անահատակողմնորոշիչ կրթությունը մարդասիրական տեխնոլոգիայի տեսակ է, որը նախատեսում է աշխատանք մարդու գիտակցության և նրա անհատական զարգացման գործընթացների հետ[5]։ Այն ինքնակազմակերպչական մանկավարժական գործընթաց է, այսինքն այնպիսի կրթություն, որը <<կառուցվում>> է երեխայի կյանքում և ոչ թե տեղակայվում նրա գիտակցության մեջ։ Դաստիարակության տեխնոլոգիան հիմնվում է երեխայի կյանքի փորձի վրա և ներգրավում նրան կենսագործունեության մեջ, ստեղծում մանկական մի աշխարհ, ազատ ընտրությունների և պրակտիկ գործունեության, ինքնազարգացման մի դաշտ։

Այսպիսով, անհատական-կողմնորոշիչ կրթությունը գիտական մանկավարժական տեխնոլոգիա է, որն իրականացնում է մարդու և նրա անհատական զարգացման

5 <<Մայրենի 2-4>>,Ուսուցչի ձեռնարկ,Կ.Թորոսյան, Վ.Սարգսյան, Հ.Խաչատրյան, Եր.Զանգակ,97, 2007, էջ 5։

փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գործընթացները։ Դա բաց, ինքնազարգացնող տեխնոլոգիա է՝ հիմնված ժամանակակից գիտական մոտե-ցումների վրա։ Դրա առանձնահատկություններն արտահայտվում են հետևյալ կերպ.

- մարդը (երեխան) դիտարկվում է որպես կարևորագույն արժեք և կրթության նպատակ,
- այն աջակցում և զարգացնում է երեխայի սուբյեկտիվ հատկանիշներն ու անհատականությունը (անհատականացված մոտեցում),
- սովորողներին ներքաշում է մշակույթի աշխարհ (մշակութաբանական մոտեցում),
- արթնացնում է անհատի ստեղծագործական ներուժը (գործնական մոտեցում),
- խթանում է սովորողներին՝ անձնական խնդիրները ինքնուրույն լուծելու անորոշ իրադրությունների ժամանակ[6]։

Տարրական կրթության հիմնական նպատակներից մեկը երեխաների երևակայության զարգացումն է: Այդ առումով ևս 2-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերում կան բազմաթիվ բնագրեր, որոնց ուսումնասիրման նպատակներից մեկը հենց երևակայաության զարգացումն է: Գրքի յուրաքանչյուր էջ գրավիչ է, հոգեհարազատ է երեխային: Յուրաքանչյուր բնագիր նկարազարդված է, մեթոդական կառույցը հագեցած է բազմաբնույթ առաջադրանքներով, որոնք նպաստում են երեխաների մտավոր, հուզական, կամային, գեղագիտական գործունեության կարողությունների զարգացմանը: Հաշվի են առնվել կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններն ու հետաքրքրությունները: Բնականաբար, ամեն ինչ ուղղված է սովորողների ստեղծագործական երևակայության ու մտածողության, կարդալու կարողությունների, խոսքի զարգացման, ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես և մարմնապես առողջ անձի ձևավորմանը:

---

6 Մայրենի 2-4, ՈՒսուցչի ձեռնարկ/Կ.Թորոսյան,Վ.Սարգսյան, Հ.Խաչատրյան, Եր., 2007, էջ 5:

<< **Դարձվածքների ուսումնասիրումը տարրական դասարաններում** >> վերնագրով մեր հետազոտական աշխատանքը, անհնար էր իրականացնել առանց դասագրքերի և դրանց կցված մեթոդական գրականության ու ձեռնարկների: Նշված ձեռնարկները բավականին օգնում են ուսուցչին արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու մայրենիի դասերը: Տարրական ուսուցման նպատակը կրտսեր դպրոցականի մեջ հետաքրքրություն արթնացնելն է, որը ձգտում է շուտ տեղեկանալ դեպքերի ընթացքին և վերջաբանին: Տարրական ուսուցման հիմնավոր նպատակներից է նաև ձևավորել երեխաների մոտ որոշակի կարողություններ և հմտություններ՝ հիմնվելով ձեռք բերված գիտելիքի վրա: Ինչպես ընդունված է ասել տարրական դպրոցում ուսուցիչի խնդիրն է սովորել սովորեցնելը:

Կրտսեր դպրոցականը ոչ միայն պետք է տիրապետի տարրական ուսումնական գործունեություն ծավալելու կարողությունների (կարդալ, գրել, խոսել, լսել), այլև մտածական գործառնությունների (վերլուծություն,ընդհանրացում, վերացարկում, որոշակիացում)[7]:

Դասագրքերում ընդգրկված են գեղարվեստական և ճանաչողական բնույթի այնպիսի ստեղծագործություններ, որոնք առավելագույնս հնարավորություն կտան իրականացնելու

դասի հիմնական նպատակները՝ կարդալու կարողության ձևավորում, լեզվի ուսուցում, սովորողների համակողմանի դաստիարակություն: Յուրաքանչյուր թեմատիկ խմբում ընդգրկված են այնպիսի նյութեր (պատմվածքներ, բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ,ճանաչողական և ուսուցողական մանրապատումներ, խնդուկներ, առածներ, հանելուկներ և սուտասելուկներ), որոնք համապատասխանում են կրտսեր դպրոցականների աշխարհընկալմանը, ճանաչողական հետաքրքրություններին և մտավոր կարողությանը: Դպրոցական ծրագրերի ոչ մի առարկա այնքան հարցեր չի առաջացնում, որքան մայրենին. <<Ի՞նչ դասավանդել>>, <<Ի՞նչ ծավալով>>, <<Ի՞նչ նպատակներ դնել ուսուցչի և աշակերտի առջև>>,

---

7<<Մայրենի 2-4>>:ՈՒսուցչի ձեռնարկ,Կ.Թորոսյան և ուրիշներ,Մակմիլան- Արմենիա, 2007,էջ 3:

<<Ինչպե՞ս հասնել դասավանդման արդյունավետության>> , <<Ինչպե՞ս գրագետ դարձնել երեխային, որ նա կարողանա ճիշտ արտահայտել իր մտքերը թե՛ բանավոր, թե՛ գրավոր>>և այլն[8]: Այս կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է շատ կարդալ լրացուցիչ գրականություն:

Ինչպես գիտենք ուսումնական գործընթացի հիմնական բաղկացուցիչ մասը դասն է: Շատ կարևոր է գիտակցել,որ ուսուցումը ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն է՝ հիմնված համագործակցության և փոխըմբռնման սկզբունքներին: Յուրաքանչյուր դաս պետք է ունենա մի հիշարժան պահ,որը երկարատև կմնա աշակերտի հիշողության մեջ: Դա կարող է լինել զարմանք, հիացմունք, ոգևորություն, հետքարքիր փաստ անակնկալ բացահայտում, գեղեցիկ փորձ, ծանոթ երևույթի վերաբերյալ ոչ ստանդարտ մոտեցում և այլն[9]:

Մեր հետազոտական աշխատանքի թեմայի հետ կապված,մեզ համար առավել կարևոր է դասերի ընթացքում բնագրի շուրջ կատարված աշխատանքը:Տեքստի բովանդակության ընկալումը միանգամից չի կարող զուգակցվել կարդալու հմտության ձեռքբերման հետ:ՈՒսուցման առաջին տարում նյութի բովանդակության ընկալումը հետ է մնում ընթերցման հմտությունից:Առաջին դասարանում աշակերտների կողմից տեքստը ընկալվում է ոչ միանման մակարդակով: Աշակերտների մի մասը ընկալում է միայն սյուժեն, որոշները կարող են ընդհանրացումներ կատարել, իսկ որոշները կարողանում են հասկանալ գաղափարը և ընկալել ենթատեքստը: Բնագրի գաղափարի և ենթատեքստի բացահայտման

նպատակով ուսուցիչը պետք է սովորեցնի աշակերտներին, թե ինչպես գտնեն իմաստակիր բառերը, արտահայտությունները և նախադասությունները: Բառերն ու բառակապակցությունները գեղարվեստական տեքստում կարող են գործածվել փոխաբերական իմաստով: ՈՒսուցչի խնդիրն է աշակերտների ուշադրությունը սևեռել նորածանոթ բառերի վրա:

8<<Մայրենի 2-4>>:ՈՒսուցչի ձեռնարկ,Կ.Թորոսյան և ուրիշներ, Եր. 2007,Մակմիլան-Արմենիա , էջ 23:

9<<Ինչպես պլանավորել մայրենիի դասը 4>>, Կ.Թորոսյան և ուրիշներ,Եր. 2018թ.,Զանգակ,էջ 6:

Ընթերցանության դասաժամերի երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել գրական տեքստը: Պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի պատկերած ստեղծագործության մեջ,ապրել այն որպես իրողություն, ապրումակցել հերոսներին, համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ, հասկանալ հեղինակի գաղափարները և կռահել ենթատեքստը:

Մայրենիի ծրագրային պահանջներից են.

1. Կարդալու հմտություններ: Վերլուծելու կարողության զարգացում:

2.Կարդացածի ընկալում, աշխատանք տեքստի վրա: Կարդացածի հիմնական մտքի առանձնացում:

3.Գրական տարրական գիտելիքներ: Ստեղծագործական կարողությունների խթանում:

4.Առարկայական ինտեգրում: Խոսքն օգտագործել իբրև մտածողության ակտիվացման միջոց:

5.Լեզվական տարրական գիտելիքներ: Բառերի, բառակապակցությունների և դարձվածքների գործառական կարողությունների զարգացում: Դարձվածային իմաստով գործածված բառակապակցությունների ճանաչում տեքստում[10]:

Ինչպես տեսանք, լեզվական նյութին վերաբերող պահանջները, հատկապես լեզվաարտահայտչամիջոցներին վերաբերող, առանձին շեշտված են որպես պահանջվող գիտելիք: Սակայն դասագրքում տեղ գտած վարժությունները սակավաթիվ են դարձվածքների ուսուցման և ամրապնդման համար:

Թեմատիկ պլանավորումներում նույնպես, մի շարք դասանյութերին կից, ներկայացված է հետևյալ պահանջները՝ գտնել բառերի ուղիղ և փոխաբերական իմաստները, ամրակայել կամ

խորացնել գիտելիքը դարձվածքների մասին, կատարել վարժությունը վերը նշված թեմայի վերաբերյալ:

10 Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե.,Զանգակ,2018,էջ 111:

1.3 Կարդալու որակական հատկանիշները



Գիտակցորեն և հասկանալով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել՝ պահպանելով ստեղծագործության մեջ ներկայացված մտքերի, դեպքերի հաջորդականությունը, տրամաբանական և պատճառահետևանքային կապերը: Կարդալու այս որակական հատկանիշի բացակայության դեպքում ուղղակի կկարդան՝ առանց ոչինչ հասկանալու: Մինչդեռ կարդացողը՝ ով էլ որ լինի, որ տարիքում էլ լինի, պետք է հասկանա , գիտակցի իր կարդացածը, հասկանա բառերը, նախադասությունները, միտք: Հասկանա

պարբերությունները,,դրանց միչև եղած բովանդակային և տամաբանական կապը։ Եվ ամենագլխավորը՝ կռահի ենթատեքստն ու գաղափարը։

Մեր հետազոտական աշխատանքի հետ կապված ,կարդալու որակական հատկանիշներից առաջնային ենք համարում գիտակցորեն , հասկանալով, ենթատեքստն ըմբռնելով կարդալու կարողությունը։ Քանի որ , տարրական դասարաններում տեղ են գտել մեծաթիվ դարձվածքներ և ինչպես գիտենք վերջիններիս ունեն փոխաբերական իմաստ, ապա երեխայի համար անչափ կարևոր է կռահել ենթատեքստը, հասկանալ բնագրի գաղափարը։ Հասկանալով կարդալու կարողության մշակումը տարրական դպրոցի մայրենիի դասի գերխնդիրն է։

Մեր թեզի թեմայի հետ կապված, լավ կարդալու որակական հատկանիշներց առանձնացնենք գիտակցորեն, հասկանալով, ենթատեքստն ըմբռնելով կարդալու կարողությունը։ Կարդացած ստեղծագործության ենթատեքստի կռահումը կրտսեր դպրոցականի համար բավականին դժվար է։ Այն հաղթահարելու ամենաարդյունավետ ուղին կանգառներով ընթերցանությունն է, տեքստի զգացմունքային, ներըմբռնողական կողմի ընկալումը։ Կրտսեր դպրոցականի համար ենթատեքստի կռահման պահը որոշակի դժվարություն է ներկայացնում,սակայն չափազանց էական է կարդացած ստեղծագործության գաղափարն ըմբռնելու հարցում։ Կարդացած ստեղծագործության ենթատեքստը մեկը չէ, ինչպես նաև գաղափարը։ Եթե ստեղծագործության գաղափարները մի քանիսն են, ապա ուսուցչից են պահանջվում վերհանել յուրաքանչյուր գաղափարը, միտքը և ենթատեքստը՝ օգտագործելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը։ Ենթատեքստի ու գաղափարի արտահայտումը խիստ կապված է պատկերավորման միջոցների առկայության հետ։ Հանդիպող դարձվածքները, լեզվաարտահայտչամիջոցները՝ հատկապես երեխային քաջածանոթ, բնագիրը դարձնում է հոգեհարազատ, գաղափարն ու ենթատեքստն էլ՝ ընկալելի։ Թեև, տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերում լեզվաարտահայտչամիջոցները բավականին շատ են և նպաստում են, որ կրտսեր դպրոցականը ծանոթ լինի վերջիններիս և հետագայում անցնելիս ունենան որոշակի գիտելիք։

Տարրական դասարանների մայրենիի ծրագրում դարձվածաբանական հատուկ աշխատանք նույնպես նախատեսված չէ։ Սակայն մայրենիի դասագրքերի բնագրերում աշակերտները բազմիցս հանդիպում են դարձվածքների, որոնց իմաստներն անպայման պետք է բացատրվեն ։

Դարձվածքները, որպես կանոն, փոխաբերությունների բնույթ են կրում, այսինքն՝ հենվում են բառի բազմիմաստության, այլաբանության, նրա լրացուցիչ <<կերպարա- յին>> նշանակության վրա։ Տարրական դասարաններում լեզվական նյութը չպետք է կազմի դասատվության նպատակ, այլ այն պետք է լինի միայն միջոց նպատակին հասնելու համար, այսինքն՝ միջոց գրական լեզուն ճշտությամբ հասկանալու, շարահյուսորեն ճիշտ, կապակցված, սահուն խոսք կառուցելու համար։ Երեխաները քերականական կանոններն ու սահմանումներն անգիր սովորելու փոխարեն լեզվական օրինաչափություններն ինքնուրույնաբար կիրառում են իրենց խոսքում, արդյունքում զարգանում են նրանց մտածողությունը, դատողական ունակությունները, որը և քերականության առջև դրված նպատակն է[11]։ Ուսուցիչը պետք է կազմակերպի բնագրի շուրջ աշխատանքն այնպես, որ աշակերտի մոտ ճիշտ պատկերացում ձևավորվի։Բնագրից դուրս բերելով այն պետք է գրել գրատախտակին , այնուհետև տալ բացատրությունը, օգտագործել նախադասության մեջ։ Կարելի է նաև նկարազարդել, կամ էլ հորինել պատմություն այդ դարձվածքներով կամ դրանց հոմանիշներով։

11 Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր.,Զանգակ,2018,էջ 300

ԳԼՈՒԽ 2.

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

2.1.ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՂԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

Դիտարկելու համար հայերենի լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրման սահմանները մայրենիի առարկայական ծրագրերում և դասագրքերում՝ մենք ուսումնասիրեցինք 2-4-րդ դասարանների մայրենիի առարկայական գործող ծրագիրն և 2-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերը՝ բացահայտելու համար, թե նրանցում ներկայացված ստեղծագործություններն ու մեթոդական կառույցի բաղադրիչները որքանով են համապատասխանում ծրագրի պահանջներին: Ներկայացնենք դասագրքերի նյութերն ըստ թեմատիկ խմբերի և նրանցում առկա լեզվաարտահայտչամիջոցները:

Դիտարկելով մայրենիի առարկայական ծրագրերը՝ մենք բացահայտեցինք, որ տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերում բավականին շատ են պատկերավորման միջոցները: Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից ելնելով՝ մենք դուրս ենք բերել 1-ին- 4-րդ դասարանների

մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերում առկա լեզվաարտա-հայտչամիջոցները: Դրանք ներկայացրել ենք աղյուսակներում, ըստ դասարանների, այնուհետև ներկայացրել տրամագրերի տեսքով: Տեղ գտած պատկերավորման միջոցներից, ցավոք, միայն դարձվածքին է կատարվում անդրադարձ : Առանձնապես այս ուղղությամբ շատ չեն վարժությունները, ներկայացված չեն հստակ սահմանումներ: Ուսուցման և մատուցման ծանրությունն ընկնում է ուսուցչի ուսերին: Այստեղ արդեն յուրաքանչյուր մասնագետ յուրովի է ներկայացնում նյութը՝ կիրառելով իրեն կամ դասարանին հարմար մեթոդներ ու հնարներ: Առանձնապես բազմազան

չեն պաստառները, որոնք ավելի դյուրին են դարձնում ուսուցչի աշխատանքը և նպաստում աշակերտի կողմից նյութի ընկալմանը։

2.2. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդրի շուրջ մենք անցկացրեցինք հարցախույզ Արարատի մարզի մի շարք դպրոցներում (Նոր ուղի, Տափերական, Արարատ քաղաքի համար 1 և 3 դպրոցներում)։ Ուսուցիչների կարծիքով տարրական դպրոցում դարձվածքների ուսումնասիրումը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանն ու երևակայության զարգացմանը։

Մեր կարծիքով՝ մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործություններում շատ են գործածված լեզվական այդ միավորները, սակայն դասագրքերում դրանց անդրադարձ գրեթե չկա,իսկ վերաբերող վարժությունները բավարար չեն։

Հիմնվելով մեր կատարած հետազոտության վրա, կատարենք առաջարկություններ.

ա) փոխել դասագրքերը,

բ) ավելացնել այդ ուղղությամբ վարժությունները,

գ) ներկայացնել հետաքրքրաշարժ դիդակտիկ պարագաներ։

Հաշվի առնելով հարցմանը մասնակցած ուսուցիչների առաջարկությունները՝ մենք ստեղծեցինք մի քանի խաղեր, ՏՀՏ գործիքների կիրառմամբ վարժություններ և դրանք փորձեցինք կիրառել ուսումնասիրությունների ընթացքում։ Համոզվեցինք, որ դասերի առավել հետաքրքիր և հագեցած անցկացման համար անհրաժեշտ է , որ ուսուցիչը կիրառի դիդակտիկ նյութեր, և վերջիններս լինեն գեղեցիկ պատկերազարդումներով, հետաքրքրություն առաջացնող։Այդպիսի խաղերի մշակումն էլ մեր հետազոտական աշխատանքի նորույթն է ։

2.3 . ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայերենի լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասուժիրության գործընթացն առավել մատչելի և հետաքրքրքշարժ դարձնելու համար մենք մշակեցինք և մայրենիի դասերի ժամանակ կիրառեցինք բազմաթիվ նկար- պաստառներ, վարժություններ, պատկերազարդ խորանարդներ, խաչբառեր, որոնք ոչ միայն նպաստեցին նյութի ըմբռնմանը, այլև դասի հետաքրքրության բարձրացմանը:Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

1. Առանձին քարտերի վրա մենք ունենք դարձվածքը նկարված, իսկ մյուսի վրա դարձվածքի իմաստ: Դասարանը բաժանում ենք խմբերի , յուրաքանչյուր խմբին տալիս 8- 10 զույգ (կախված խմբում եղած աշակերտների թվից), պատրաստված նկար և դարձվածքի իմաստ պարունակող քարտ: Աշակերտների խնդիրն է ճիշտ և արագ նկարը համապատասխանեցնել իմաստին:

Քթից բռնած ման ածել - խաբել, իր կամքին ենթարկել:

Գլխին սառը ջուր լցնել-հիասթափեցնել,զգաստացնել:

Լեզուն բռնել- մի բան ասելու կամ խնդրելու համար համարձակություն ստանալ:

Քիթը կախել- տխրել, դեմքը խոժոռել:

Լեզուն քոր գալ- մի բան ասելու ցանկություն զգալ:



Մատների արանքով նայել- առանց պատշաճ ուշադրության,իմիջայլոց, չտեսնելու տալ:

Փշերի վրա լինել-խիստ անհանգիստ լինել:

Աչքի վրա տեզ ունենալ- հարգել ընդունել մեկին։

Լեզուն երկար -ըմբոստ , համարձակ խասել։ Խոսելու չափն ու սահմանը չիմանալ։



Սիրտը ճաքել – սաստիկ վախենալ, ահաբեկվել:



Ջրի գին ունենալ- շատ էժան լինել, կոպեկի արժեք չունենալ։



Լրացրու՛ դարձվածքների բաց թողնված բառերը։

Ուղղահայաց

1.Ականջին ------անել։

2.Աչքի ----- պես պահել։

4.Գլուխը ----------։

5. --------- երեսանի ։

9.Մի------- ծերանալ։

Հորիզոնական

3.-------անցքով անցնել։

6.----- --- պղպջակ։

7.Շուն ու --------դառնալ։

8.Խոսքը --------զցել։



Հաջորդ հանձնարարության պահանջը հետևյալն է՝

Համապատասխանեցրու՛ դարձվածքը իմաստին։ ՈՒսուցիչը քարտերը խառնած բաժանում է, իսկ աշակերտները համապատասխանեցնում են։

Ականջը տանել	Զանձրացնել, շարունակ խոսել, շաղակրատել, նվագելով հոգնեցնել, գլուխը տանել։ Հորդորներով, խնդրանքներով ձանձրացնել։
Ականջին օղ անել	Մշտապես հիշել, մտապահել իբրև խրատ, լավ իմանալ։
Ականջները չորս անել	Մեծ ուշադրությամբ լսել, ականջները սրել։
Ականջի հետևը գցել	Անտարբերության մատնել որևէ բան, ուշադրություն չդարձնել, մոռացության տալ։
Աչքը ծակ	Անկուշտ,ագահ, անհագ, որևէ բանի նկատմամբ բուռն ցանկություն ունեցող։

Աչքի լույսի պես պահել։	Մեծ հոգատարությամբ, սիրով ու խնամքով պահել ու ահպանել, սիրել ու փայփայել։
Աչքից ընկնել	Նախկին հարգանքը չունենալ, այլևս չսիրվել ու արգվել, մեկի համակրանքն ու հովանավորությունը որցնել։
Ատամները սրել	Պատրաստ սպասել՝ մի բան ձեռք գցելու։Մեկի, մի անի դեմ թշնամական գործողություն պատրաստել։
Ատամները համրել	Մեկի թույլ կողմերը ճանաչել, նրանից չվախենալ, աշվել։
Լեզուն փորը գցել	Երկյուղից, վախից պապանձվել, ձայն չհանել։

Լեզու գտնել	Համաձայնության գալ,իրար հասկանալ։
Գլխի ընկնել	Մի բան հասկանալ, կռահել, մտադրությունը գուշակել։
Գլուխ պահել	Ծուլություն անել, իրեն խնայել, խուսափել
Կրակն ընկնել	Փորձանքի, դժվար կացության մեջ հայտնվել։Ընկնել ինպիսի վիճակի մեջ,որ ինչ անելը չիմանալ։
Շուն ու կատու դառնալ	Հակառակորդներ դառնալ, գզվռտել, ապրելանհաշտ անքով, անվերջ վեճ ու կռվի մեջ լինել։

Պղտոր ջրում ձուկ դասալ	Իրարանցումից , խառնաշփոթությունից օգուտ քաղել նձնական շահի համար:
Ջրի գին ունենալ	Շատ էժան լինել: Մի քոռ կոպեկ էլ չարժենալ:
Սիրտը փորն ընկնել	Սաստիկ վախենալ, ահով բռնվել:
Սիրտը բաց լինել	Անկեղծ, պարզասիրտ,զվարթ, ուրախ, անքեն լինել:
Համը հանել	Տաղտկալի դարձնել, ձանձրացնել, զզվեցնել:

Դարձվածքների վերաբերյալ գիտելիքների ամրապնդում թեստային առաջադրանքի միջոցով:

1.Ո՞րը դարձվածք չէ:

○աչքի փուշ ○աչքից ընկնել

○ աչք մտնել ○աչքը ցավել

2.Ո՞ր նախադասության մեջ է <<կրակն ընկնել >>արտահայտությունը օգտագործվել որպես դարձվածք:

○Արսենը կրակն էր ընկել ընկերոջ պատճառով:

○Աղջնակի ձեռքի խաղալիքը կրակն էր ընկել:

3. Ո՞րն է <<Սիրտը շահել>>արտահայտության իմաստը:

○սիրել մեկին ○ վիճակախաղով շահել

○ սիրաշահել ○ սիրտ տալ

4. Լրացրո՛ւ բաց թողնված բառը:

Գլխին ———— կարդալ:

○ դասագիրք ○ ավետարան

○ թերթ ○ բանաստեղծություն

5.Բաց թողնված տեղում գրիր համապատասխան դարձվածքը
Արմենը ————,ում մասին է խոսքը:

○ Աչքի ընկավ ○ գլխի ընկավ

○ականջ դնել

Լեզվաարտահայտչամիջոցների ուսուցումը պատկերազարդ խորանարդներով ։

Մեր թեզի նորույթներից է նաև պատկերազարդ խորանարդների պատրաստումը և կիրառումը։ Այն անչափ գրավիչ է։ Խորանարդի բոլոր 6 նիստերին փակցնում ենք գունավոր նկարներ, որոնք նախապես ընտրել ենք ՝ համապատասխանեցնելով մեր առաջադրանքի հետ։ Պատկերների մեջ ընդգրկել ենք մարմնի մասեր՝ գլուխ, ականջ, քիթ, աչք, իրեր՝ ջուր, գնապիտակ, գործողություն ՝ քնել , քամել և այլն։ Կատարում ենք հետևյալ հերթականությամբ՝

1.ուսուցիչը կարդում է դարձվածքի իմաստը.

2.աշակերտը պետք է պատկերները գտնի համապատասխան պատկերները ,

3. ճիշտ հերթականությամբ դասավորի

4. բարձրաձայն ասի դարձվածքը։

Օրինակ՝ ուսուցիչը կարդում է .

-Դժվարությամբ որևէ բան անել, մեծ չարչարանքով գործը գլուխ բերել, մեծ աշխատանք թափել, ծանր աշխատանքով ապրուստը ճարել։

Նպատակահարմար է առաջարկվող աշխատանքը իրականացնել խմբերով։

Աշակերտները քննարկելուց հետո կորոշեն , որ դա <<Քարից հաց քամել >>

դարձվածքն է։



Գլխի ընկնել -մի բան հասկանալ, կռահել, մտադրությունը գուշակել։



Ատամները հաշվել-մեկի թույլ կողմերը ճանաչել, նրանից չվախենալ, չքաշվել։



Ատամները սրել- պատրաստ սպասել՝ մի բան ձեռք գցելու։ Մեկի, մի բանի դեմ թշնամական գործողություն պատրաստել։



Աչքից ընկնել-նախկին հարգանքը կորցնել, անուշադրության մատնվել։



Ոսկի ձեռքեր ունենալ- շնորքով, հմուտ լինել։

Էշի ականջում քնել-շրջապատի իրադարձություններին անտեղյակ, կատարվող դեպքերին անիրազեկ լինել։



<<Լեզվաարտահայտչամիջոցների դիտարկումը կարդացած ստեղծագոր- ծության դիպաշարի ըմբռնման միջոց>> վերնագրով մեր հետազոտական աշխատանքի շրջանակներում իրականացրեցինք մայրենիի մեկ դաս։ Ընտրել էինք 4-րդ դասարանը, որտեղ պետք է վարեինք մեր դասը։ Դասի թեման Վիլյամ Սարոյանի <<Թագավորն ու խաբեբան>> պատմվածքն էր։

Մինչ նոր դասի ընթերցումը վերհիշեցինք թե ի՞նչ է դարձվածքը: Աշակերտներն ասացին, որ դրանք կայուն բառակապակցություններ են և վերարտադրվում են նույնությամբ: Թվարկեցին մի քանի դարձվածքներ: Բնագրի ընթերցումից առաջ հանձնարարեցինք դուրս բերել դարձվածքները: Աշակերտները կարդացին հերթով, փոքր պարբերություններով: Նշենք, որ մեր ընտրած բնագրում բավականին շատ էին դարձվածքները: Օրինակ՝ գլուխ հանել, գլխի ընկնել, քթից բռնած ման ածել, լույս աշխարհ գալ: Դարձվածքները գրեցին գրատախտակին, ապա յուրաքանչյուր աշակերտ իր կարդացած հատվածում հանդիպած դարձվածքը փոխարինեց համապատասխան իմաստն արտահայտող բառով: Կարդացին և համեմատեցին երկու նախադասություններն էլ: Երեխաները տեսան , դարձվածք պարունակող նախադացությունն ավելի պատկերավոր ու դիպուկ է դարձնում հեղինակի միտը , ասելիքը, ենթասեքստը, քան մյուսը ուրում փ ոխարինել էինք դարձվածքի իմաստին համապատասխանող բառով: Օրինակ՝ բնագրի հետևյալ նախադասության՝ <<Մի անգամ նույնիսկ քաղաքի ամենախորամանկ մարդուն քթից բռնած ման ածեց>> դարձվածքը՝ քթից բռնած ման ածել, գրեցինք համապատասխան իմաստով և ստացվեց հետևյալ.

- Մի անգամ նույնիսկ քաղաքի ամենախորամանկ մարդուն խաբեց:

Այս փոփոխություններից հետո , աշակերտներն իրեն բարձրաձայնեցին , որ դարձվածքով ավելի պատկերավոր է և հետաքրքիր:

Անդրադարձանք որոշ արտահայտությունների, որոնք կարող են ունենալ ուղիղ և փոխաբերական իմաստ: Օրինակ՝ կրակն ընկնել, ջուրն ընկնել բառակապակցությունները օգտագործեցինք նախադասություններում ՝մի դեպքում ուղիղ, մյուսում՝ փոխաբերական իմաստով: Մեր պատրաստած քարտերով կատարեցինք խմբային աշխատանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերի ուսումնասիրումը մեր հետազոտական աշխատանքի՝ <<ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ>>վերնագրով, թեմային վերաբերող գրականության ուսումնասիրումը և հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Տարրական դասարաններում դարձվածքների և այլ պատկերավորման միջոցների ուսումնասիրումը նպատակաուղղված է երեխաների բառապաշարի զարգացմանը, կարդացած ստեղծագործության ենթատեքստի գիտակցմանը և դիպաշարի տրամաբանության ըմբռնմանը:

2. Նպաստում է երևակայության, վերացական մտածողության, ճանաչողական, տրամաբանական և վերլուծական կարողությունների ձևավորմանը: Ճանաչում են դարձվածքները , առած- ասացվածքները և այլ ստեծագործություններ, թափանցում դրանց խորքը, գտնում տրամաբանությունն ու ենթատեքստը:

3.Ծանոթանալով ժողովրդական բանահյուսությանը՝ սովորողներն արժևորում են այն ամենը , որը ստեղծել է հայ ժողովուրդը և փորձում են կիրառել առօրյայում :

4. Պատկերավորման միջոցներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է դասագործընթացը կազմակերպել այնպես, որ զարգանան սովորողների համագործակցային և հաղորդակցական ունակությունները:

5. Տարրական դասարաններում խաղային մեթոդների և խմբային աշխատանքների միջոցով լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրումը՝ դասագործընթացը դարձնում է առավել գրավիչ, ձևավորվում են աշակերտների կոլեկտիվ աշխատելու, միմյանց լսելու , մտքեր փոխանակելու կարողությունները:

6. Լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրումը նպատակաուղղվում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը, նրանց բարոյական կրթությանը, լավն ու վատը, չարն ու բարին տարբերակելու , գեղեցիկը , բարին , մարդկային տեսնելու և գնահատելու կարողությունների զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագրքերում ընդգրկել հետաքրքրաշարժ վարժություններ, որոնց կնպաստեն տարրական դասարանների աշակերտների լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրման գործընթացն ավելի հետաքրքիր և գրավիչ դարձնելու համար:

Դասագրքերին կից մեթոդական ուղեցույցներում տալ հանգամանալից ցուցումներ լեզվաարտահայտչամիջոցների ուսումնասիրման գործընթացն ավելի մատչելի և դարձնելու համար։

Դասի պլան

Ամսաթիվ՝

Ուսուցչի ազգանուն, անուն- Ա.Հակոբյան

Առարկա- Մայրենի

Դասի թեման- Թեման՝ Հ. Մաթևոսյան << Ա՛յ քեզ բան. ինչ կա-չկա, ինչ երևում – չի երևում՝ հա՛յ- րե՛ - նի՛ք է>>

Դասի տեսլականը	**Դասի նպատակը**	*Կարևոր դրույթները* Ի՞նչ գիտելիքներ և մտություններ են մտնում դասի կատակի մեջ:	*Անհրաժեշտ նյութերը* Ի՞նչ է անհրաժեշտ ասի համար-դիդակտիկ արագաներ:
	● վերարտադրել բնագիրը, ասկանա ենթատեքստը,հերոսների նդիրները: ● Բնութագրել հերոսներին՝ ւջբերումներ կատարելով տեքստից: ● Զարգացնել բնագրից արձվածքները գտնելու, առանձնացնելու իմաստը հասկանալու կարողությունը : **Վերջնարդյունք** Գլխավոր մտքերի ընկալում, սեփական եսակետի արտահայտում, լրահանգումների կատարում . լեզվական աշխատանքների ականացում	Հանուն հայրենիքի Արժանապատվություն, Հոր քթից ընկնել Կարոտ, կրակ ու պատիժ Որոտների մեջ, չռված աչքեր Լեզուն թառ անել, հոտաղ, աճկալ, բեզարել. հոր շունչն ռնել, խաշիլ	Ցուցապաստառներ 1 Հայրենիք 2 Թևավոր խոսք 3 ձևաթղթեր խմբային շխատանքների համար 4 թերթիկներ նհատական շխատանքի համար 5 Դարձվածքի տեսքով Պատկերներ

Դասի նթացքը, եթոդները	**Գնահատում**		
	Դասի սկիզբ		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների ործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Անդրադարձ ստեղծագործությանը, ղինակին, գաղափարին: Հարցեր դիպաշարի վերաբերյալ, ամառոտ ներկայացնեն աշակերտները:	Ներկայացնեն Հրաչյա աթևոսյանի կյանքը,դեպքերի ութացքը Ստեղծագործության աղափարը և իրենց տեսակետը Ի՞նչ է հայրենիքը>>Ակրոստիքոսների ընթերցում	Հարցադրող, ղղորդող
	Նոր նյութի ներկայացում		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների ործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

	<<Երիցուկ >> մեթոդով խմբերը պատասխանեն հարցերին, մեջբերելով դասագրի տվյալ հատվածը։	Մոտենալ գրատախտակին պոկել թերթիկը և պատասխանել, կամ եթե անհրաժեշտ է նստել իր տեղը կարդալ պատասխանը դրքից։	Երիցուկ մեթոդի դահանջի բերկայացումը հարցեր
	Ուղղորդված աշխատանք		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Հանձնարարություն.դարձվածքներ Պարունակող նախադասությունների դուրս բերում և փոխարինում դրա իմաստով;	Գրում են գրատախտակին այն նախադասությունները, որոնք դարձվածք են պարունակում, այնուհետև փոխարինում են արտահայտած իմաստով։	Հանձնարարող, հետևող, ստուգող
	Ինքնուրույն աշխատանք		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Բաժանել թերթիկներ, որտեղ գրված են բառերը	Այդ բառերով կազմել առակապակցություններ կամ նախադասություններ, որտեղ բառերը հանդես կգան ուղիղ և փոխաբերական իմաստով։	Թերթիկներ,
	Դասի գեղարվեստական մաս Ներկայանում են աշակերտները		
		1 Բանաստեղծություններ. Պ.Ս. <<Հայաստան>> Հ. Ս. <<Հայաստան ասելիս>> 2 Դրվագ հոր և որդու զրույցի Եսարանից 3 Մարտիկի երգը	
	Դասի ավարտ		

	Ինչպես են աշակերտներըամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած ութի կարեւորությունը:Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել են ումնական դրույթները եւ հասել դասի նպատակին: Ինչո՞ւ/ինչպես են շակերտները ընդգրկված լինելու:	
	Ինքնակպչուն թերթիրկների վրա գրել այն միտքը, կերպարը, ղվագը, որը նրանք կհիշեն 10 տարի անց; Փակցնում են ամպրուկի պատկերի վրա:	
	Տնային աշխատանք, եթե նախատեսվում է: -	
	Վերլուծություն/անդրադարձ(լրացվում է դասից հետո):	

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Յու.,Հայոց լեզու և խոսքի մշակույթ,Եր., ԵՊՀ ,2015։

2Բալայան Ա., 200 խաղ,Եր., Զանգակ, 2017,էջ 36։

3 . Բեղիրյան.Պ.,Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր.,Լույս, 1973։

4. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., ԵՊՀ հրատ., 2007, 296 էջ։

5.Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Երևան,Զանգակ ,2018։

6. Եզեկյան Լ.,<<Հայոց լեզվի ոճագիտություն>>,Եր.,2014։

7. Թորոսյան Կ. ,Ինչպես պլանավորել մայրենիի դասը 2, Եր.,2018։

8.Թորոսյան Կ. և այլք, Մայրենի 2-4։Ուսուցչի ձեռնարկ,Եր., Մակմիլան-Արմենիա, 2007։

9.Թորոսյան Կ. և այլք, Մայրենի 2-4 : Ոսուցչի ձեռնարկ Եր., Զանգակ, 2011։

10.Թորոսյան Կ. և ուրիշներ, <<Մայրենի 4>> , Հանրակրթական դպրոցի 4-րդ դաս.դասագիրք,Եր. , ՄԱՆՄԱՐ,2012։

11.Թորոսյան Կ. ,Ինչպես պլանավորել մայրենիի դասը 3,Եր.,2018։

12. Թորոսյան Կ. ,Ինչպես պլանավորել մայրենիի դասը4,Եր.,2019։

13.Հարությունյան Հ., Հայոց լեզուն հազարագանձ,Եր.,Արևիկ,1989։

14.Հովհաննիսյան Գ, Գալստյան Ն. և ուրիշներ , Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները, Եր., ԵՊՀ, 2014։

15. Մելքոնյան Ս.Ա.,Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., Լույս, 1984։

16.Մկրտչյան Գ. ,Ուղղագրական ժամանց ,Եր.,2007։

17.Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզվի ոճաբանություն,Եր.,Լույս,1988։

18.Սահակյան Վ.Ա., Դպրոցական բառարան, Եր., 2019։

19. Սարգսյան Վ.Ա. և այլք , <<Մայրենի 3>>,Եր., Մակմիլան -Արմենիա, 2008։

20. Սարգսյան Վ.Ա. , <<Մայրենի 1>>,Եր.,ՄԱՆՄԱՐ 2013։

21.Սարգսյան Վ.Ա. և այլք, <<Մայրենի 2>>, Եր., ՄԱՆՄԱՐ, 2016։

22. Տեր-Գրիգորյան Ա.,Մայրենի լեզուն երկրորդ դասարանում,Մեթոդական ուղեցույց, Եր., Լույս,1990։